

ԼԻԼԻԹ ԿԱՌԼԵՆԻ
ԵՓՐԵՄՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ դոցենտ, Կատարողական արվեստի
պատմության և տեսության ամբիոնի վարիչ,
ԵՊԿ Միջառարկայական Մասնագիտացման Կենտրոնի հիմնադիր-ղեկավար
E-mail: mikaelterlemez@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.1.64-79

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական
խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 11.9.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 19.10.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.8.2023 թ.

ՀԱՅ ԿԻՆՈՅԻ 100-ԱՄՅԱՆ ՀՈՐԵԼԵՆԻ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ (Ա. ԲԵՐԲԵՐՅԱՆ,
Վ. ՇԱՐԱՖՅԱՆ) 2022-2023 ԹԹ.
ԿԻՆՈԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԲՈՆԱՊԵՏԱԿԱՆ ՌԵԺԻՍՐ ՊԱՏԿԵՐՈՂ ՖԻԼՄԵՐՈՒՄ

Անփոփոխ

Հոդվածը կազմված է հեղինակի գեկույցի հիման վրա, որը կարդացվել է 22.02.2023 «Կոնրադ Ադենաուեր
հիմնադրամի» աջակցությամբ հրատարակված հայ-գերմանական հոդվածագրքի շնորհանդեսին՝ վերնագիր-
նշանաբանի խորը իմաստավորմամբ. «Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսության» (Երևան, 2022):
Տպագրվում է առաջին անգամ: Հոդվածում միջառարկայական կապերի համատեքստում դիտարկվում է
կինոերաժշտության դերը մինչ օրս տաքուացված թեմաներով 2022-2023 թթ. Հայաստանում նկարահանված երկու
ֆիլմերում. «Ամերիկացի» (գեղարվեստական ֆիլմ, ռեժիսոր Մայրլ Գուրջյան, կոմպոզիտոր՝ Անդրանիկ
Բերբերյան). Թեման՝ 1946-1949 թվականների հայրենադարձության պիքին ուղեկցող ստալինյան
բռնաճնշումներն են: «Նկարչի երեք գերեզմանները» (վավերագրական ֆիլմ, ռեժիսոր Հարություն Խաչատրյան,
կոմպոզիտոր՝ Վաչե Շարաֆյան). Թեման՝ սովետահայ մարդու արտագաղթի էմպիրիկ՝ փորձագիտական 30-
ամյա ուսումնասիրությունն է՝ նկարիչ Վահան Անանյանի ողբերգական ճակատագրի օրինակով, որի աճյունը
թաղված է Երևանում, Տալլինում և Օդեսայում:

Բանալի բառեր. Կինոերաժշտություն, Մայրլ Գուրջյան, Հարություն Խաչատրյան, Անդրանիկ Բերբերյան, Վաչե
Շարաֆյան, անձի պաշտամունք, հայերի հայրենադարձություն, գեղանկարչություն, խորհրդային
արվեստագետի արտագաղթ-փախուստ:

Abstract

PhD in Arts, Associate Professor, Founder and Head of YSC Center for Interdisciplinary Specializations, Head of the
Department of History and Theory of Performing Arts at YSC **Lilit Karlen Yepremyan**. - **"The Film Music of 2022-2023 by
Armenian Composers (A. Berberyan, V. Sharafyan) Depicting the Fate of a Soviet Person under the Totalitarian Regime"**.

The article is based on the author's report at the presentation of the collection of articles by Armenian and German musi-
cologists "Creating Ideologies on Purpose" (Yerevan, 2022), published with the assistance of the Konrad Adenauer
Foundation. In the context of interdisciplinary research, film music is considered in the films of the last two years, shot in
Armenia and devoted to topics that are still taboo in domestic cinematography, i.e. the life of Armenians under the condi-
tions of the ideology of totalitarianism and the personality cult of Stalin. They served as the subject of analysis. "American"
(2022, a full-length feature film directed by Michael Gurjian, composer: Andranik Berberyan) is about mass repressions
faced by repatriated Armenians from abroad during the 1940s, killed or thrown into prisons, camps and exiles. "Three
Graves of the Artist" (2023, a full-length documentary film, directed by Harutyun Khachatryan, composer: Vache
Sharafyan), embarks on an empirical study spanning three decades exploring the theme of emigration and escape from the
ideology of Soviet dictatorship, focusing on the example of the tragic fate of the artist Vahan Ananyan, whose ashes were
simultaneously buried in three cities: Yerevan, Tallinn, Odessa.

Key Words: film music, Michael Gurjian, Harutyun Khachatryan, Andranik Berberyan, Vache Sharafyan, personality cult, repa-
triation of Armenians, Soviet artist's emigration and escape.

Абстракт

Канд. иск., доцент, основатель и руководитель Центра междисциплинарных специализаций ЕТК, завкафедрой
Истории и теории исполнительского искусства ЕТК **Лялит Карленовна Епремян**. - **"Киномузыка армянских
композиторов (А. Берберян, В. Шарафян) в фильмах последних лет (2022-2023) о судьбах советского человека в
условиях тоталитарного режима"**.

Статья написана на основе доклада автора на презентации сборника статей армянских и немецких музыковедов «Творить идеологии вопреки» (Ереван, 2022), изданного при содействии Фонда Конрада Аденауэра. В контексте междисциплинарного исследования рассматривается киномузыка в фильмах последних двух лет, снятых в Армении и посвященных до сих пор табуированным в отечественном кинематографе темам: жизни армян в условиях идеологии тоталитаризма и культа личности Сталина. Предметом анализа послужили: «Американец» (полнометражный художественный фильм, 2022, реж. Майкл Тюрджян, композитор Андраник Берберян) о массовых репрессиях репатриированных в 1940-е годы зарубежных армян-«ахпаров», убитых либо брошенных в тюрьмы, лагеря и ссылки; «Три могилы художника» (полнометражный документальный фильм, 2023, реж. Арутюн Хачатрян, композитор Баче Шарафян), эмпирическое исследование продолжительностью в три десятилетия эмиграции-побега от идеологии советского тоталитаризма на примере художника с трагической судьбой Баана Ана- ньяна, чей прах погребен одновременно в трех городах: Ереване, Таллине, Одессе.

Ключевые слова: киномузыка, Майкл Тюрджян, Арутюн Хачатрян, Андраник Берберян, Баче Шарафян, культ личности, репатриация армян, эмиграция-побег советского художника.

Նախարան

Հայ կինոյի 100-ամյա հոբելյանին ընդառաջ, կարծում եմ, հասունացել է ժամանակակից հայ կինոյի աներկբա վերելքի նոր ալիքն արձանագրելու պահը: Մենք անդրադառնալու ենք այս ասպարեզում վերջին մեկ-երկու տարիների ակնհայտ ձեռքբերումներին՝ դիտարկելով դրանք երաժշտական լեզվաստածողության տեսանկյունից: Ընդ որում, իմ ստեղծագործական որոնումներն այս ասպարեզում հիմնված են բացառապես գիտաժողովի՝ Ադենաուերի հիմնադրամի ուղեցույց բնաբանի վրա. «Ստեղծագործել՝ ի հեճուկս գաղափարախոսության», (1.):

Ահա այստեղ է, որ առնչվում ենք գրեթե լիովին տարուցված թեմաներին: Մի դեպքում՝ փաստագրական նյութի հիման վրա Հայֆիլմում նկարահանված «Ամերիկացի» գեղարվեստական ֆիլմն է, թեման 1946-1949 թվականների հատկապես հայրենադարձության ալիքն ուղեկցող ստալինյան բռնաճնշումներն են՝ իրենց յուրահատուկ սևեղծությամբ հենց այսպես կոչված «ախպարների» վրա, որ գեղարվեստական կինոյում գրեթե արծարծված չէ այսօրինակ ուղիղ՝ խորհրդային գրաքննությունից զերծ ձևով: Ոգևորիչ և նշանակալի փաստ է, որ հայ կինոյի պատմության մեջ առաջին անգամ հայկական ֆիլմը՝ «Ամերիկացին» ընդգրկվեց 2023 թվականի ամերիկյան «Օսկար» մրցանակաբաշխության «Լավագույն արտասահմանյան ֆիլմ» անվանակարգի կարճ ցուցակում՝ 15 անվանում:

Մյուս դեպքում՝ «Նկարչի երեք գերեզմանները» վավերագրական ֆիլմում հանդիպում ենք սովետահայ մարդու արտագաղթի թեմայի էմպիրիկ՝ փորձագիտական ուսումնասիրությանը, որը ավելի քան 30 տարվա շարունակական և հետևողական նկարահանումների արդյունքում լիովին ամբողջանում է և ֆիլմի հերոսի՝ նկարիչ Վահան Անանյանի մահվան արդյունքում ավարտին է հասցվում որպես հայ ժողովրդի ընդհանրացված ողբական:

«AMERIKATSI»

2020 թվականին ընդամենը ութ անվաճ ընթացքում Հայֆիլմ կինոստուդիայում նկարահանվեց Մայքլ Գուրջյանի «Ամերիկացի» գեղարվեստական ֆիլմը, որի պրեմիերան կայացավ 2022 թվականի «Ոսկե Ծիրան» փառատոնի բացմանը: Ֆիլմի ռեժիսոր, սցենարիստ, դերասան և գլխավոր դերակատար Մայքլ Գուրջյանը

(ծնվ. 1971 թ., ԱՄՆ), 2006-ին առաջին անգամ լինելով Երևանում, որոշեց հենց այստեղ մի ֆիլմ նկարել: Նա կատարեց այդ խոստումը գրեթե 14 տարի անց՝ երկար փնտրելով իր եզակի թեման հայ կինոարվեստում: Ֆիլմը նվիրված է ռեժիսորի պապին՝ Մանուկ Գուրջյանին և անուղղակի կերպով ինքնակենսագրական շեշտադրում ունի: Թեև Մանուկ Գուրջյանը 1940-ականների հայրենադարձության մաս չի կազմել, բայց Յեղասպանությունից մազապուրծ եղած վերապրողներից է: Այնքան ծանր է, այնքան ազդեցիկ և դրամատիկ է Յեղասպանության թեման, որ Մայքլը որոշում է հպանցիկ անցնել այդ պատմությունով, տեղափոխելով հանդիսատեսին այլ իրողություն, որն էլ սովետական տարիներին պետականորեն կազմակերպված հայերի հայրենադարձությունն էր ու դրան ի պատասխան՝ Կրեմլի հաշվեհարդարը մեր հայրենադարձների նկատմամբ, որոնք ձերբակալվեցին, գնդակահարվեցին, ջշվեցին «սիբիրներ»՝ ի թիվս մեր այլ հազարավոր հայրենակիցների... Այս, մինչ օրս կինոյում տարուցված թեման, Յեղասպանությունից ոչ պակաս դրամատիզմով է հագեցած՝ հանդիսանալով մինչև վերջ չգիտակցված խեղձան՝ սերնդե սերունդ փոխանցվող տրավմայի աղբյուր:

Ինչպես և Յեղասպանության պարագայում, ոչ ոք պաշտոնապես չի պատժվել այս ամենի հետևանքով, այսպես կոչված «ռեպրիլիտացիան» սուս կոսսեր էին և ոչ գործողություն՝ մեղանշում, հատուցում, սերունդների խեղձան ամոքում և այլն: Մա առանձին մի անհատի պատմություն չէ՝ այն սովետական ժողովրդի ճակատագրի ամփոփ նկարագիրն է: Բսկ անձի պաշտամունքի տարիներին գլխավոր հերոս՝ բանտարկյալի կյանքի հստակ պատկերն իրական կյանքից է վերցված. ռեժիսորի ուկրաինացի ընկերոջ շատ կոնկրետ ծանոթի պատմությունն է: Բայց ամենամեծ խորհուրդը, որ ռեժիսորն ուղիղ տեքստով հասցեագրում է հանդիսատեսին, բոլորովին էլ ցավը, հուսահատությունը, ատելությունը, դիւր չէ. ֆիլմի ամփոփիչ՝ էկրանին բառացիորեն գրվող եզրահանգման տեքստը հետևյալն է. «Մենք կարող ենք կառուցել մեր կյանքը ժպիտներով, այլ ոչ արցունքներով»: Ռեժիսորը իր ֆիլմը դասում է անգամ կատակերգության ժանրին. «Ես ցանկանում էի նկարահանել մի հայկական ֆիլմ, որը հաճույք կպատճառեր դիտողին, կլիներ հուսադրող, և ամենակարևորը՝ կլիներ այնպիսին, որին ոչ հայերը նույնպես կուզեին առնչվել» (2.):

Երաժշտության հեղինակն է այս ժանրում արդեն մեծ փորձ և ճանաչում ձեռք բերած երիտասարդ կոմպոզիտոր Անդրանիկ Բերբերյանը* (ծ. 1994 թ., Երևան), ով աշխատել է 30-ից ավելի ֆիլմերի երաժշտության վրա, այդ թվում՝ «Վարդապետի լուսությունը», «Սողոմոնի երգերը», «Էրկեն կիշեր», «Կաֆկայի երազը» և այլն:

Ավարտելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Արամ Մայրանի կոմպոզիցիայի մասնագիտական դասարանը, Անդրանիկը մի խումբ ընկերների հետ դարձավ ժամանակակից երաժշտության ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող առաջադեմ մասնագետներից մեկը: Մակայն Անդրանիկի կյանքում շուտով ծագեց մի նոր սեր, նոր տարերք՝ կինոերաժշտությունը, որը գրեթե լիովին կյանք էրիտասարդին: Ժամանակակից կոմպոզիտորական արվեստի տոտալ հաշվարկված օրինաչափությունների աշխարհից Անդրանիկը սլացավ նոր տիեզերք, որտեղ ամեն պրոյեկտ ներկայանում է իրեն հասուն կարտասիստիկալիզացիայով և ժանրային պահանջներով՝ ժողովրդականից մինչև մասսայական երգ ու դասական արվեստ, ազգայինից դեպի կամերային և սիմֆոնիկ գործիքակազմ, ռետրոյից մինչև խիստ նորարարական կոմպոզիտորական լեզվաստածողություն: Մի խոսքով՝ երաժշտական օվկիանոս, որտեղ Անդրանիկ Բերբերյանն ի գործ է պատասխանելու ցանկացած ստեղծագործական մարտահրավերի:

Բսկապես զարմանալի է, թե որքան հագեցած են երաժշտությամբ «իր» ֆիլմերը. հաստատվոր պարտիտուրներ են դրանք: Երաժշտության տևողությունը այս ֆիլմում մոտ 1 ժամ 20 րոպե է, որն ընդամենը կես ժամով է զիջում ողջ ֆիլմի տևողությանը: Գրվել է 60 դրվագ, որոնցից ֆիլմում օգտագործվել է 50-ը: Մեզանում մեծ ձեռքբերում է այսօր, որ սիմֆոնիկ պարտիտուրը ձայնագրված է կենդանի կատարմամբ (մի երևույթ, որ այդքան բնական և սովորական էր ոչ հեռավոր անցյալում), ընդ որում շատ հեղինակավոր երաժիշտների կողմից. դա, առաջին հերթին, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբն է՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, հայտնի մենակատարները՝ Անուշ Նիկողոսյան (ջութակ), Միքայել Ոսկանյան (թառ), Էթերի Հովհաննիսյան (քանոն), Միքայել Նավասարդյան (թավջութակ), Նարեկ Ավագյան (ֆլեյտա), Սուրեն Խորոզյան (կլառնետ), Թաթուլ Հաջյան (կիթառ), Գոշ Մարգարյան (բաս) և ուրիշներ, այդ թվում՝ բլուր, դափ, սանթուր, դաշնամուր, ուր, դուդուկ, ակորդեոն, վոկալ... Արդեն գործիքակազմից երևում է, թե ինչպիսի «միքս» է արվել՝ վարպետորեն սինթեզվել են դասական սիմֆոնիկ նվագախումբը, ազգային գործիքները, տարբեր ոճերի վոկալը, դասական կիթառը, ակորդեոնը, դաշնամուրը և այլն: Մակայն այս բազմազան ու խայտաբղետ միջոցների ու ծավալների հետ մեկտեղ Անդրանիկը բոլորովին չի փորձում ամբողջապես իր վրա կենտրոնացնել հանդիսատեսի ուշադրությունը: Նա աշխատում է կադրում՝ հենց կադրի մեջ, այլ ոչ հեռանկարում ֆիլմից որևէ կերպ առանձ-

նանալու միտումով: Նրա երաժշտությունն ամբողջությամբ միահյուսված է կադրի հետ, աննկատ կառավարելով դրամատուրգիական զարգացման ընթացքը: Երաժշտության շնորհիվ կադրը կարող է ներսից «ուռչել», ընդլայնվել, ողողել իրենով «կինոժապավենի» զգալի տարածքներ, բայց նաև կարող է մանրացնել և արագացնել ռիթմը՝ ավելի սլացիկ դարձնելով զարգացումը: Երաժշտությունը կինոպարտիտուրի աուդիովիզուալ շարքում բացում է նոր շերտեր՝ երբեմն փոխլրացնող, հաճախ էլ՝ հակադրվող ու խիստ կոնտրաստային:

«Կառուցենք մեր կյանքը ժպիտներով, այլ ոչ արցունքներով»՝ այս ուղերձը թեև հայտնվում է Էկրանին ֆիլմի ամենավերջում, սակայն գաղափարապես արդարացված է հենց առաջին կադրերում, երբ սնդուկում թաքնված երեխայի աչքի առջև մեկ րոպե անց գնդակահարվող նանին՝ տատիկը, մինչ այդ փոքրիկ Չառլին հասցնում է թողնել իր ժպիտը և մի երգ՝ իբրև հիշողություն, իբրև սպրեյու գլխավոր խորհուրդ, իբրև հավատի և լավատեսության, հայ մարդու և հայ ազգի մշտնջենական գոյության խորհրդանիշ՝ «Գորանին»: Անդրանիկ Բերբերյանը ֆիլմի երաժշտական մասը ձևավորելու պատվերն ստացել է արդեն վերջին փուլում, երբ գրեթե ավարտված են եղել նկարահանումները, և ռեժիսորը որոշ հատվածներում հարմարեցված երաժշտական հատվածներ է ունեցել՝ համահունչ սեփական պատկերացումներին: Այդպիսի կետերից է ֆիլմի առաջին կադրերում հայերի գնդակահարության տեսարանը՝ տղայի ականջներում արձագանքող նանիի «Գորանիի» ուղեկցությամբ: Երգի անվանումը տղան Չառլին չի հիշելու, հետագայում երկար փնտրելու է այն, ամենքին հարցնելով, արդյոք ծանոթ է մեղեդին, ասես փնտրելով ինքն իրեն, իր ինքնությունը, իր «ես»-ը, իր արմատներն ու էությունը՝ գոյութենական իմաստն ու հոգու հանդարտությունը... Վոկալ անսամբլի, ազգային գործիքների, սիմֆոնիկ նվագախմբի հնչողությամբ երգի ժամանակակից մշակումը զուգակցվում է ասես մոլլայի կանչի ոչ տեմպերացված՝ գործիքային առատ մեխիզմներով հարուստ, սարսուռ առաջացնող հատվածի հետ, ընդ որում և՛ հայերին, և՛ դահիճներին՝ քրդերին ու թուրքերին, Բերբերյանը բնորոշում է տարածաշրջանում տարածված գործիքների միջոցով, սակայն շատ տարբերակված՝ ազգային ձայնարտաբերմամբ: Բայց հեռացող նավի արագացող ընթացքի հետ մոդուլյացիայի միջոցով պատկերն այդ տեսարանից տեղափոխում է մեզ 1948 թիվ: Միայն այդքան է Յեղասպանության հատվածը, մեր աչքերի առջև այն երաժշտական մեկ հատվածով կապվում է Գյումրիում հացի հերթի տեսարանին: Բերբերյանը վարպետորեն կարողանում է 2 րոպե 43 վայրկյան տևողությամբ էպիզոդում իրար միացնել պատմության ահեղի շերտեր՝ ասես ավտոմեքենան ուղղակի թեքվում է անկյունից այն կողմ ու հայտնվում բոլորովին այլ իրականության մեջ:

Տեղափոխվենք 1948 թվական: Հացի անվերջանալի հերթ, 1940-ականների ռետրո պատկեր, որը թարմ հաց հասցնող մեքենայի մոտենալուն պես վերածվում է քառսային, զուտ հայկական հերթին բնորոշ խառնաշփոթի:

* «Ամերիկացի» ֆիլմի երաժշտության մի առանձին ազգագրական շերտ ներկայացված է Միքայել Ոսկանյանի հետաքրքրական հեղինակային մշակումներով և իր երաժշտական խմբի կատարմամբ: Մակայն, դրանց վերլուծությունը դուրս է տվյալ հոդվածի շրջանակներից:

Հենց այստեղ է տեղի է ունենում Չառլիի հետագա ձակատագիրը կանխորոշող դիպվածը: Այս ընթացքում Չառլիին հաջողվում է գլխավոր հերոսուհիներից մեկի՝ հայուհի Սոնայի՝ (դերասանուհի՝ Նելլի Ուլարովա, Ռուսաստան) ոտնատակ ընկած փոքրիկ տղային պահելով գլխավերևում, փրկել տապալումից: Մրա արդյունքում Սոնան անչափ մեծ երախտագիտությամբ և ջերմությամբ է լցվում Չառլիի հանդեպ, նրան ճաշի հրավիրում, որտեղ էլ հենց Չառլիին երգում է «Գորանիի» մեղեդին ու հարցնում՝ սա չե՞ք լսել, ինչպե՞ս է կոչվում: Սոնան ծանոթացնում է նրան ՃՄ-ում ծառայող իր ռուս ամուսնու հետ: «Կարո՞ղ ենք այս ամերիկացուն՝ լավությանը ի պատասխան, կարգին գործի տեղավորել, դա ամենաքիչն է, ինչ պետք է անենք մեր միակ զավակին փրկելու դիմաց», – հորդորում է Սոնան ամուսնուն: Վերջինս պատրաստակամությամբ երաշխավորում է իր օգնությունը: Եվ, գուցե խանդից դրդված, կնոջից գաղտնի հրաման է արձակում ձերբակալել Ամերիկացուն՝ բուրժուական փողկապ կրելու անհետք մեղադրանքով և տեղափոխել հենց այն բանտը, որտեղ՝ որպես պատիժ, պարետային ծառայություն է իրականացնում Սոնայի եղբայրը՝ եկեղեցական, հոգևոր սյուժեներն իր նկարներում պատկերելու մեղադրանքով:

Հատվածն սկսվում է Սոնայի լայտթեմայով, որը տաք տեմբերի քնարական մեղեդային շնչով է ողողված՝ խորը, նրբագեղ կերպար է մարմնավորում: Ընտրված է գործիքային երկխոսության ձևաչափը՝ փողային և լարային միմյանց լրացնող թեմատիկ անցումներով, որոնց քնարական երգայնությունը բեռնատարի հայտնվելուն պես անընդմեջ կասեցվում է հացի «հայավարի» հերթում խառնաշփոթի պատկերով. գրեթե տեսանելի միմյանց հետ զշտվող, ասես իրար «հրող» ու հերթից կես խոսքից դուրս հանող ռիթմախառն աղանդների և այստեղից-այնտեղից իրար ձայնակցող անհատականացված գործիք-կերպարների՝ մոտիվների «լաթերով»: Հացի հերթի պատկերն իրապես արտահայտիչ է, «նկարագրողական», այն լուծված է ոճավորման մոտեցմամբ, ընդ որում որպես օրինակ, կարծում եմ, նկատի է առնվել Խաչատրյանի բալետային երաժշտությունը՝ վառ, հակասական և անհատականացված մեղեդային և կերպարային շերտերով, հարուստ գործիքակազմով, տեմբերի անդադար խաղով և պատկերի վիզուալ շարժունությամբ դինամիզմով: Հետաքրքիր է, որ բոլոր երաժշտական հատվածները հրատակ տեղավորվում են կադրի մեջ, ունեն համեմատաբար ավարտուն ձև՝ էպիզոդների փոքրիկ ժամանակահատվածներում կերպարները մի ամբողջական ընթացք են ապրում՝ ներկայացում, բախում, միմյանցից ազդվելու արդյունքում որոշ փոխակերպում, պայմանական ավարտ, դեպի մյուս մասը տանող կապ, օղի մեջ կախված սպասում՝ լյուֆտ...

Ֆիլմի երաժշտության մյուս սեմանտիկ՝ արտահայտչական շերտը Խորհրդային Հայաստանի 1940-1950-ական թվականների պատկերն է: Միանգամայն տրամաբանական է, որ այստեղ լուծումը գտնված է ընդգծված ոճավորման՝ ստիլիզացիայի տիրույթում, որը, Բերբերյանի բնորոշմամբ, ունի աղերսներ ոչ միայն սովետական շրջանի մասսայական երգերի, պարահրապարակի, փողային նվա-

գախմբի հնչեցրած քայլերգերի, այլև հայ կոմպոզիտորների, այդ թվում Խաչատրյանի, Միրզոյանի ստեղծագործությունների հետ: Այդ առումով շատ հետաքրքրական են լուծված Երկրաշարժի և Չառլիի ձերբակալման տեսարանները: Երկուսն էլ յուրահատուկ *perpetuum mobile*-ներ են՝ սեղմ, կտրուկ, սլացիկ փոփոխվող կադրերով, որոնք ասես, իրար հերթ չտալով, վրա-վրա են գալիս՝ գլխապտույտի հասցնելով հանդիսատեսին: Այդպիսին է Բերբերյանի «Լեզգիական» երկրաշարժի դրվագում՝ ժողովրդական գործիքների և սինֆոնիկ նվագախմբի հնչողությամբ, կադրն ու երաժշտությունը, աղետն ու պարը, այստեղ զուգակցված են հակադրության, այլ ոչ փոխլրացման սկզբունքով: Ինչո՞ւ է այդպես՝ գուցե շարունակում է գործել Մայքլ Գուրջյանի բնաբանը. չեզոքացնել ողբերգականը, ամենաձանր ու դրամատիկ իրադարձությունները վերածել էթե ոչ խաղի, երգիծական պատկերի, սպա դինամիկ գործողության, պարային-խաղարկային ռիթմի՝ հագեցած դիմադրական մեծ ուժով ու անմար «ժպիտով»...

Ձերբակալության տեսարանը լուծված է նույն խելակորույս տեմպի մեջ, երբ սլացիկ, ասես հազար ասեղով ծագող սանթուրի մեղեդային և մետրառիթմիկ «տեղատարափը» հանկարծ փոխակերպվում է քայլերգի: Ակկորդեոնի, դաշնամուրի ու բասային կազմի ծանր քայլի ընթացքը տալիս է բիրտ ու անողոր ուժի, ստալինյան ռեժիմի բաց, ուղիղ նկարագիրը, իրապես «Քեռին՝ Ստալինն էկավ մեր բակը» պատկերը (3. էջ 69-70): Ասես խորհրդային ռեժիմի կապարով կերտած Ալեքսանդրովի անվան երգի-պարի զինվորական անսամբլն է մարմնավորում ժողովուրդների հոր վեր հառնող աժդահա ֆիգուրը, որը մեր օրերում յուրահատուկ «ռեինկարնացիա» է ապրել:

*И вдруг журавли опять вернутся в свои края;
Дом наш родной и дивный,
Дом, где нас ждет одна зима...*

Վերջին շերտը, որի վրա կցանկանայի կանգ առնել, ֆիլմի լայթմոտիվների համակարգն է: Բոլոր գլխավոր հերոսները՝ Չառլին, Սոնան, Ռուզանը, Տիգրանը, ունեն իրենց լայտթեման, որը ֆիլմի ամբողջ ընթացքում զարգացում է ապրում և ներկայանում գործիքավորման նորանոր հանդերձանքներով և զգայի կերպարանափոխություններով: Հատկանշական է հենց Ամերիկացու՝ Չառլիի լայտթեման. թվում է, այն տրամաբանական կլիներ օժտել բյուզային ինտոնացիաներով, սակայն արված է դրա ճիշտ հակառակը՝ խորհրդային գրոսայգիների «տանցայրոշադկայից» մեզ ծանոթ փողայինների վալսային նվագակցությամբ հնչում է գլխավոր հերոսի թեման՝ սինկոպային փոքր ինչ հեզմական խրոմատիկ թռիչքային (փոքրացրած օկտավա) մոտիվով, փորձելով գնալ իր ճանապարհով, ի վերջո «խելոք»՝ հնազանդորեն ենթարկվում է ռուսական ժողովրդական երաժշտությանը բնորոշ ավարտական պլագալ դարձվածքին՝ միացնելով անհամատեղելին. «Ամերիկացուն» և 1940-1950-ականների սովետական իրականությունը:

«ՆԿԱՐՉԻ ԵՐԵՔ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ»

«Նկարչի երեք գերեզմանները» ֆիլմը ներկայիս մեզանում երկու ամենահայտնի և ակտիվ գործող երևելի արվեստագետների համագործակցության արդյունք է. խոսքը կինոռեժիսոր Հարություն Խաչատրյանի* և կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի** համատեղ աշխատանքի մասին է՝ վաղամեծիկ նկարիչ Վահան Անանյանին նվիրված «Նկարչի երեք գերեզմանները» վավերագրական ֆիլմում: Առաջին անգամ այս չափազանց հուզիչ ու բազմաշերտ կինոնկարը՝ 1985-ին Տալլին արտագաղթած հայ մարդ-մոլորակի ողիսականը, ներկայացվեց երևանյան հանդիսատեսին 2023 թ. հունվարի 10-ին՝ նորաբաց Գինոյի տանը: Իսկ 2023 թ. փետրվարի 18-ին այն մեծ հաջողությամբ ցուցադրվեց նաև Գյումրիում: Այնպես որ բառացիորեն նոր ծնված ստեղծագործության մասին է խոսքը:

Իսկ ո՞վ է այդ ամեղծվածային Վահան Անանյանը

«Ոմանք գուցե հիշեն Վահանին 1970-ականների վերջերի բռնեմական Երևանից, բայց ընդամենը այդքանը,

* Հարություն Խաչատրյան (1955, Ախալքալաք)՝ Հայաստանի կինոգործիչների միության նախագահ, Հայաստանի ժողովրդական արտիստ, ՀՀ Պետական և ՀՀ Նախագահի մրցանակների դափնեկիր, «Ոսկե Օրբան» փառատոնի հիմնադիր և տնօրեն (մինչև 2017թ.): Նկարահանել է «Կոնո», «Սպիտակ քաղաք», «Քամին ունայնության», «Վավերագրողը», «Վերադարձ ավետյաց երկիր», «Վերջին կայարանը», «Սահման», «Պոետի վերադարձը», «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ», «Փակուղի» և այլ վավերագրական ֆիլմերը: Խաչատրյանը Եվրոպական կինոակադեմիայի ընտրող անդամ է, Նիդերլանդների Արքայազն Քլաուսի Մրցանակակիր, Ֆրանսիայի Հանրապետության Մշակույթի և Հաղորդակցության նախարարության Clevaliet de l'Ordre des Arts et des Lettres շքանշանակիր:

** Վաչե Շարաֆյան (1966, Երևան)՝ ավարտել է ԵՊԿ եղվարդ Միրզոյանի մասնագիտական դասարանը և ասպիրանտուրան, 1992-1996 թվականներին դասավանդել է Երուսաղեմի Հայոց ժառանգավորաց ձեմարանում, դասախոսություններով հանդես է եկել Կալիֆոռնիայի պետական համալսարանում: Օրերս նշանակվել է ԵՊԿ Կոմպոզիցիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար:

Ավելի քան 100 ստեղծագործությունների հեղինակ է, այդ թվում բազմաթիվ սիմֆոնիկ, կամերային, խմբերգային ստեղծագործությունների, իր գրչին են պատկանում «Աբգար արքա» օպերան, երեք բալետները (վերջերս մեծ հաջողությամբ Սպենդիարյանի Օպերայի և բալետի թատրոնում բեմադրվեց նրա «Հին աստվածները» բալետը), ինչպես նաև «Հովեր» երգչախմբի իրականացրած պրեմիերան «Զարմանալի պարզ ու հասարակ բաները» նորարարական երգչախմբային թաթերական ներկայացումը՝ ռեժիսոր Նարինե Մալանի բեմադրությամբ: Այս ամենի հետ մեկտեղ լուրջ ներդրում ունի նաև կինոերաժշտության և թատերական ներկայացումների ձևավորման ասպարեզում: Ըստ ամենի հետ մեկտեղ լուրջ ներդրում ունի նաև կինոերաժշտության և թատերական ներկայացումների ձևավորման ասպարեզում: Անպատկերացնելի ռիթմով է ստեղծագործում Շարաֆյանը, նա ջանասիրության և աշխատասիրության չափանիշն է մեզանում: Միջազգային հարթակներում ներկայացված լինելու քանակով կարող է մրցել մեր մեծատուն կոմպոզիտորների հետ և բոլորից առաջ անցնել՝ գրեթե ամեն ամիս նա պրեմիերաներ է ունենում աշխարհի հեղինակավոր բեմերում և իհարկե, Հայաստանում:

– գրում է լրագրող, հրապարակախոս Արայիկ Մանուկյանը. – Ինչո՞ւ Հայաստանը չի ճանաչում այդ տաղանդավոր հայ նկարչին, չի տեսել նրա կտավները, նրա ցուցահանդեսները Երևանում չեն կազմակերպվում: Ինչո՞ւ նրա կրթոտ, փոթորկոտ, հախուռն աշխարհը «չմնաց» Հայաստանում: Ինչո՞ւ Վահանը թողեց իր երկիրը: [...] Ինչո՞ւ նա մսխեց կյանքը թափառումների մեջ ու հեռացավ երկրային կյանքից՝ ապրողներին թողնելով իր աշխարհի վրձնահարումները միայն (4.):

Անչափելի քանակով՝ դրսում ստեղծած ավելի քան 1000 կտավների հեղինակ է Անանյանը, որոնք ցրված են այս ու այն քաղաքների ու երկրների մասնավոր հավաքածուներում՝ Օդեսայում, Գիևում, Տալլինում, Մոսկվայում, Երևանում, Սանկտ-Պետերբուրգում, ինչպես նաև Շվեդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ճապոնիայում:

Վահանը ծնվել է 1959-ին Երևանում: Սովորել է քանդակագործ Սերգեյ Ստեփանյանի արվեստանոցում, 1977-ին, 1978-ին, 1979-ին ունեցել է անհատական ցուցահանդեսներ, մասնակցել Մոսկվայում, Լենինգրադում, Օդեսայում կայացած ցուցադրություններին: Չմերվելով Խորհրդային Հայաստանի արվեստագետին կաշկանդող մթնոլորտի հետ՝ նա 1985 թվականին տեղափոխվում է համեմատաբար ավելի ազատական եվրոպական Տալլին քաղաքը, քանի որ բուն Եվրոպայի սահմանները այդ շրջանում անանցանելի էին homo soveticus տեսակի համար: Մինչև 1993-ը բազմաթիվ ցուցահանդեսների և նախագծերի է մասնակցել: 1994-ին տեղափոխվել է Օդեսա և ունեցել 7 անհատական ցուցահանդես: Ապրել է նաև Գիևում, 1995-ին գլխին արմատուրայով՝ մետաղե ամրանով հարվածի հետևանքով գլխուղեղի ծանր վնասվածք է ստացել: Վախճանվել է 2006-ին Օդեսայում, 47 տարեկանում: Իր մասնատված աճյունը հողին է հանձնված Երևանում, Տալլինում և Օդեսայում՝ նշված վերջին երկու քաղաքներում նկարչի յուրահատուկ արվեստն առավել նշանակալից հետք է թողել:

Արտագաղթի թեման շոշափող Հարություն Խաչատրյանի վավերագրական ֆիլմերի շարքը լոկ արվեստի գործ չէ՝ այն սովետական և հետխորհրդային շրջանի «անտունու» մի ֆունդամենտալ գիտական ուսումնասիրություն է, որի իրական մեծ արժեքը մեզանում դեռ մինչև վերջ չի գիտակցված: Անհատի ազատ ընտրության իրավունքը, այդ թվում բնակվելու երկրի ընտրությունը, միշտ հարգվել է Հայաստանում, սա փաստ է, ինչպես նաև փաստ է, որ արտագաղթը փոքր մասի է նման, երբ մարդը, այրելով անցյալի հետ կապող բոլոր կամուրջները, գլխակորույս նետվում է դեպի անհայտություն և մեկընդմիջտ դադարում է հայաստանյան կյանքի մասնիկը լինելուց՝ միահյուսվելով այլ մշակույթին, լեզվին, մարդկանց, օտար փողոցների անցորդներին, օդին, անձրևին, առօրյա կյանքին ու արվեստին: Եվ ահա այստեղ է, որ Հարություն Խաչատրյանը կատարում է մի սխրագործություն: Տասնամյակներ շարունակ հետևելով իր հերոսների կյանքին, նա հայաստանցիներին նկարահանում է հենց իրենց նոր բնակավայրերում՝ աննկատ կերպով մղելով իր հերոսներին

ինքնավերլուծական խոստովանության: Ֆրոյդի հետքերով գնացող այս հոգեվերլուծական ֆիլմերի հիմքում դրված են հերոսների մենախոսությունները, որոնք շտմեցուցիչ անկեղծության աստիճանի են հասնում: Նույն ռեժիսորի «Քամին ունայնության» ֆիլմից այս կինոնկար տեղափոխված հատվածում. «երիտասարդ Վահանն ինքն է ամեն ինչ ասում: Ասում է իր նման՝ չքննադատելի խոսքի, նրբանկատության, տաբուների մասին: Ասում է բաց նյարդով, ուղիղ նշանակությամբ» (4.): Բնչպե՞ս, ի՞նչ մեթոդով է հեղինակը ներխուժում հերոսի հոգու խորքերը, ի՞նչ հնարքներ է օգտագործում ամենաբաց խոստովանանքներին հասնելու հարցում՝ ամբողջությամբ չի բացահայտվում: Գաղտում հիմնականում բացառապես հերոսն է՝ աշխատավոր մարդը, պոետը, նկարիչը, որ խիզախել է իր իսկ կյանքի վրա փորձ կատարել և խորհում է իր մասին՝ որպես մարդ էակի, անհատի, հայի, «արմատից կտրված պտուղի» մասին, որ նոր արմատներ պիտի գցի ու գրի անձայրածիր աշխարհում իր տեղը գտնելու նոր ողիսականը: Եվ կրկին ռեժիսորը հետևում է Ֆրոյդին՝ պահպանելով լեգենդար հոգեվերլուծաբանին բնորոշ մոտեցման չեզոքությունը. «Բարձրաձայն մտածող կինո է Խաչատրյանի կինոն: Ռեժիսորը չի մատուցում եզրահանգումներ, չի տալիս բանաձևեր, չի ձուլում կադրապարներ: Նույնիսկ չի ցույց տալիս իր մտահոգությունները, չի կիսում իր ապրումները: Նա չի պարտադրում հույզ կամ զգացումներ, չի կորզում կարեկցանք կամ խղճահարություն: Չի ուղղորդում միտքը և ուղղակի բարձրաձայն մտածում է: Դու ազատ ես քո ընկալումներում», - գրում է Մանուկյանը (5.): Սակայն էկրանին կադր առ կադր հյուսվող այս առեղծվածային պատումն ինչ-որ մի պահին հանդիսատեսի հոգում սկսված փոխակերպվում է խորը դրամատիզմով լի *Lacrimosa*-ի առ Հայ մարդը, «անվերջ վերադարձող մարդու հավերժական փախուստները», առ Մայր-Հայրենիք, որ ողբարյով իր հանձարեղ զավակի կորստի, կործանված ու խորտակված երազանքները, մինչ օրս սպասում է նրա «վերադարձին»:

Ի վերջո *post scriptum* այս բազմաշերտ շարքի բոլոր ֆիլմերի՝ «Քամին ունայնության», «Վերադարձ ավետյաց երկիր», «Վերջին կայարանը», «Պոետի վերադարձը», «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ», «Փակուղի», «Նկարչի երեք գերեզմանները», այս բոլոր ֆիլմերի գլխավոր հերոսը, պարզվում է, հենց ինքը՝ Հայրենի Տունն է, Հայկական Պետությունն ու Հայոց Պետականությունն է, որի պահապաններն ենք բոլորս...

Զարմանալի է և, ինչպես միշտ Վահանի դեպքում, առեղծվածային, որ այս «կրքոտ, հպարտ ու հանդուգն», «անսանձ բնավորությամբ օժտված» փոթորկվող նկարիչը, որը շոկային «հեփենինգներ» էր կազմակերպում՝ էպատաժային ազդեցություն գործելով հանդիսատեսի վրա, միշտ չէ, որ հոգու հայելի հանդիսացող իր նկարչական արվեստում էքսպրեսիվ, ծայրահեղ լարված, բռնկվող կրքերի աշխարհ է պատկերում:

Ի սկզբանե իր գեղարվեստում Վահանը ձգտել է հոգևոր և կրոնական սյուժեների, ուրվագծի պարզ նրբագեղության, գույնի և ֆոնի յուրօրինակ շերտավորման ու խորության, աստվածային հարմոնիայի... Արվեստաբան Օլգա Սավիցկայան գտնում է, որ Վահանի «վերջին և լավագույն աշխատանքների հիմնական իմաստը լույսի ձևավորումն է» (6.): Լույսի թրթռն ու մաքրամաքուր, ասես մանկան շնչով ողողված օդն ու տարածությունը նկատելի է նրա բոլոր կտավներում: Բնձ համար դրանք նրբագեղ ճաշակի ու չափի զգացողության մարմնացումներ են՝ կառուցված հայ գեղանկարչության, մանրանկարչության, զարդանախշերի հարուստ ավանդույթների հիմքով ու դեպի ժամանակակից ազատ մտային աշխարհ թռիչքային մի կամար ստեղծելու կարողությամբ: Միաժամանակ՝ հայկականից դուրս ազդեցությունների կրող են՝ համաշխարհային գոհարներից շունչ առած և համաշխարհային արվեստի չափանիշներով չափելի արվեստ:

Այդ պատճառով տրամաբանական է թվում ռեժիսոր Հարություն Խաչատրյանի կողմից ֆիլմի կոմպոզիտորի ընտրությունը. Վաչե Շարաֆյան՝ նրբագեղագույն արվեստագետ, երաժշտական «արարեակի»՝ զարդանախշի վարպետ, խաչքարի խորություն և լույսի թեթևություն առկայծող երաժշտության հեղինակ, որ հյուսված է հոգևոր երաժշտության, կոմիտասյան ավանդույթների, մեր դասականների և ժամանակակից արվեստի անոթային միասնության շերտերից: Իր երաժշտական լեզուն, որն ունի վառ արտահայտված ազգային նկարագիր, առնչվելով նորարարական ուղղություններին, շատ յուրօրինակ է և միանգամայն ճանաչելի:

Մի հարորդագրության մեջ՝ ի պատասխան իմ հարցադրմանը, Վաչեն գրեց ինձ. «Ստեղծագործող մարդն օժտված է ժամանակն ու տարածությունը յուրահատուկ կերպով ընկալելու՝ տեսնելու-լսելու-զգալու կարողությամբ: Եվ ինձ համար ամենաբաղձալի, երանելի վիճակը հենց այդօրինակ պայծառեցման, լուսավորման (*прозрение*) պահն է, երբ ժամանակակից բարդագույն գործընթացներում, խաչաձևվող բազմաշերտ հնչյունային կլաստերներում հանկարծ ինքստիմբյան բացահայտվում և մերկանում է պարզ ու հասարակ ըմբռնելու, դեպի բացարձակ գեղեցկությունը՝ կյանքն ու լույսը տանող ճանապարհը: Ամեն անգամ, երբ ապրում եմ այդ օրհնյալ պահը, ամբողջ էությամբ զգում եմ, որ գոյություն ունի Բարձրագույն Բնաստություն, որն անխնայ է: Սակայն այն որոնելու, դրան հասնելու երանելիությունն ինձ համար հողեղեն կյանքի ամենավեհ նպատակն է»:

Մա Շարաֆյանի երաժշտության ամենահստակ բնորոշումն է. լույսը, թթվածնով լցված օդը, առանձգական տարածությունը, որը խորքեր և շերտեր է բացում, հոգևոր երգից եկող պարզությունը, որն է հստակ հենքից չկառչելու և անբռնազբոս օդերում սավառնելու միայնակ ու ինքնամիտի կերպարներն իր երաժշտական պերսոնաժներն են, և հենց դրանք են, որ արձագանքում են Վահանի արվեստին:

Կ Ի Ն Ն Ե ր ա ժ շ տ ու թ յ ու ն

Ֆիլմի հիմքում «Petrified dance» երաժշտական հաստատված է՝ «Քարացած կամ Անվերջանալի պար» դաշնամուրի և ջութակի համար էքսպրիմենտը, որը որոշակի հաստատվածում միաձուլվում է ֆիլմի հերոսի նվագի հետ՝ իր իսկ ձեռքով պատրաստված ֆլեյտայի վրա: «Petrified dance»՝ ջութակի և դաշնամուրի «երկխոսությունը» Վաչե Շարաֆյանի և նրա դասեր՝ երիտասարդ տաղանդավոր ջութակահարուհի Պոլինա Շարաֆյանի կատարմամբ է հնչում ֆիլմում, բայց այն արդեն նաև ձայնագրվել է Մարթա և Անի Ազնավուրյանների կողմից. CD-ն լույս է տեսել ԱՄՆ-ում, ու գործն ապրում է նաև ֆիլմից առանձին՝ իր սեփական լիիրավ կյանքով:

«Petrified dance». Պոլիֆոնիկ մտացողությամբ ծավալվող այս պատումը, որքան էլ զարմանալի է, հասցնում է իր փոքր մասշտաբներում ձեռք բերել սոնատային ձևի որոշ հատկանիշներ. երկու հիմնական կերպարների հանդիպման, միաձուլման և միմյանցից ազդվելով լույսի մեջ տարալուծվելու մի պատմություն է սա: Ջութակի մասնաբաժինն ունի աղերսներ հոգևոր տաղի հետ, սակայն ամբողջապես հեղինակային է՝ մեջբերում չէ, և, չնայած հռետորական, ասերգային բնույթի, ունի ավարտուն պարբերության ձև: Դաշնամուրի նվագաբաժնի թեման երկու փոքր էլեմենտներից է բաղկացած, մեկը՝ հիշողության մեջ միանգամից դաջվող մեղեդային մոտիվն է՝ բացառապես ամենաբարձր ռեգիստրում ծավալվող տոնայնական հենքից զուրկ, անորսալի թոփոխային ուրվագծով՝ ապակեպատ, սառցաբեկորային և երկրորդ տարրը՝ այն հալեցնող արարեսկ-զարդանախշը, որը փոխանցվում է ջութակին, որպես մի ինքնաբավ խորհրդանիշ, երբ էլեմենտը՝ մեյլզվր, ինքնին կարևորվում է՝ ֆոնից փոխակերպվելով ռեյլեֆային կերպարի, ինչպես և Վահանի շատ նկարներում: Կոմիտասի միջոցով մեր ազգային մտածողությանը փոխանցված իմպրեսիոնիստական դաշնամուրային ֆակտուրան, նվագակցության պուանտիլիստական՝ կետային երաժշտական վրձնահարվածները, որոնք գունավորված են մերթ առանձին տոներով, մերթ գունային «ակորդ-ողկույզներով», ամբողջացնում են պատկերը:

Վերջաբան

«Շատ կարելոր է, – կարծում է Շարաֆյանը, – ֆիլմի ունկնդրումից հետո թողնել երաժշտական հիշողություն»: Վաչեի և Վահանի գուրգուռն արվեստների երաժշտական հիշողությունը Լույսն է, որի որոնման ճանապարհին չկան անհաղթահարելի պատնեշներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Творить идеологии вопреки., /Сб. статей (доклады совместной - Фонда Конрада Аденауэра и Ереванской государственной консерватории имени Комитаса - научной конференции к 100-летию ЕТК, 2021, 28-29 октября), Ер.: Асогик, 2022, 175 с.
2. Բախչինյան Ա., Մայրլի Գուրջյան, «Ամերիկացին» իմ ամենաբովանդակալից կինոնախագիծն է» //Ազգ շաբաթաթերթ, 08.04.2022:
3. Տե՛ս Է. Միրզոյանի Միմֆոնիայում հայտնի երգի ներմուծման ենթատեքստի մասին. *Եպրեյան Լ. Կ.*, Парадокс Эдварда Мирзояна, или Благодаря и вопреки советскому строю..., /Творить идеологии вопреки (сб. статей-докладов Меж-

дународной научной конференции к 100-летию ЕТК, Фонд Конрада Аденауэра, Ереванская государственная консерватория имени Комитаса, 2021), Ереван, Асогик, 2022. с.69-70.

4. *Սանուկյան Ա.*, Ո՞վ է անդրծվածային Վահանը..., //հայեր, համահայկական մեդիափոխարկ, 19. 12. 2016, thearmenians.am (հոդվածը վերատպված է «Առավոտ» թերթից):
5. *Սանուկյան Ա.*, Իրականության ու երազանքի «Փակուղին»: //հայեր, համահայկական մեդիափոխարկ, 11.09.2017 թ., thearmenians.am (հոդվածը վերատպված է //Առավոտ օրաթերթից):
6. *Савицкая Ольга.*, Преодоление., //Одесский Альманах, архивировано 21 сентября 2021 года, web.archiv.org

Creating Ideologies on Purpose, /Collection of articles (joint reports - Konrad Adenauer Foundation and Yerevan State Conservatory named after Komitas - scientific conference dedicated to the 100-year anniversary of YSC, 2021, October 28-29), Yer.: Asoghik, 2022, 175 p.

Bakhchinyan A., Michael Gurjian. "The American' is my most meaningful film project" // "Azg" weekly, 04.08.2022.

Yepremyan L. K., The Paradox of Edward Mirzoyan, or Thanks to and in spite of the Soviet System..., /Creating Ideologies on Purpose" (collection of articles of the International Scientific Conference dedicated to the 100-year anniversary of YSC, Konrad Adenauer Foundation, Yerevan State Conservatory named after Komitas, 2021), Yerevan, Asoghik, 2022. p. 69-70.

Manukyan A., Who is the Mysterious Vahan..., //All-Armenian media platform "Hayer", 19. 12. 2016, thearmenians.am (the article is reprinted from newspaper "Aravot").

Manukyan A., The "Dead End" of Reality and Dream. //Pan-Armenian media platform "Armenians", 11. 09. 2017, thearmenians.am (the article is reprinted from "Aravot" daily).

Savitskaya O., Overcoming, //Odessa Almanac, archived on September 21, 2021, web.archiv.org

REFERENCES

1. Creating Ideologies on Purpose, /Collection of articles (joint reports - Konrad Adenauer Foundation and Yerevan State Conservatory named after Komitas - scientific conference dedicated to the 100-year anniversary of YSC, 2021, October 28-29), Yer.: Asoghik, 2022, 175 p.

Bakhchinyan A., Michael Gurjian. "The American' is my most meaningful film project" //Azg weekly, 04.08.2022.

Yepremyan L. K., The Paradox of Edward Mirzoyan, or Thanks to and in spite of the Soviet System..., /Creating Ideologies on Purpose" (collection of articles of the International Scientific Conference dedicated to the 100-year anniversary of YSC, Konrad Adenauer Foundation, Yerevan State Conservatory named after Komitas, 2021), Yerevan, Asoghik, 2022. p. 69-70.

Manukyan A., Who is the Mysterious Vahan..., //All-Armenian media platform "Hayer", 19. 12. 2016, thearmenians.am (the article is reprinted from newspaper "Aravot").

Manukyan A., The "Dead End" of Reality and Dream. //Pan-Armenian media platform "Armenians", 11. 09. 2017, thearmenians.am (the article is reprinted from "Aravot" daily).

Savitskaya O., Overcoming, //Odessa Almanac, archived on September 21, 2021, web.archiv.org

Հեղինակի մասին տե՛ս էջ 65:

About the author. Go to 65.

Об авторе. см.: стр. 65.